Պատվաստանյութեր

Քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց համար

Այն մարդիկ, որոնք ապրում են քրոնիկ հիվանդություններով, ինչպիսիք են շաքարային դիաբետը, ասթման և թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունը (COPD), կարող են ավելի մեծ դժվարություն ունենալ՝ պաշտպանելու իրենց կանխարգելվող հիվանդություններից: Հիվանդանալու դեպքում քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց համար հոսպիտալացման և մահվան վտանգն ավելի մեծ է: Պատվաստանյութերի միջոցով կանխարգելվող որոշ հիվանդություններ կարող են Ձեր արյան շաքարը բարձրացնել շատ բարձր մակարդակի կամ կարող են առաջացնել շնչուղիների այտուցում՝ հանգեցնելով թոքաբորբի:

Պատվաստումներն անվտանգ, արդյունավետ և հեշտ միջոց են կանխարգելվող հիվանդություններից Ձեզ պաշտպանելու համար: Այնուամենայնիվ, կախված այն հանգամանքից, թե որքան է վնասված Ձեր իմունային համակարգը՝ հնարավոր է, որ Դուք կարիք ունենաք խուսափելու որոշ պատվաստանյութերից կամ սպասեք, մինչև Ձեր իմունային համակարգն ուժեղանա:

Հարցրեք Ձեր բժշկական մատակարարին, թե որ պատվաստանյութերը Դուք պետք է ստանաք:

Ո՞ր պատվաստանյութերի կարիքը ես ունեմ:

Խոսեք Ձեր բժշկական մատակարարի հետ՝ իմանալու, թե որ պատվաստանյութերն են խորհուրդ տրվում Ձեզ և Ձեր ընտանիքի անդամներին: Ահա ամենատարածվածներից մի քանիսը.

- **Գրիպի դեմ պատվաստանյութ:** Սա պետք է ստանաք ամեն տարի, հատկապես աշնանը, որպեսզի նվազեցնեք գրիպով հիվանդանալու հավանականությունը: Եթե 65 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, հարցրեք Ձեր մատակարարին ավելի մեծ չափաբաժնով գրիպի պատվաստանյութի մասին:
- **COVID-19-ի դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութը ժամանակ առ ժամանակ թարմացվում է՝ պաշտպանելու վիրուսի ամենանոր ենթատեսակներից: 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց խորհուրդ է տրվում ստանալ թարմացված COVID-19-ի դեմ պատվաստանյութի առնվազն 1 դեղաչափ:
- **Թոքաբորբի դեմ պատվաստանյութ:** Պաշտպանում է պնևմակոկային բակտերիաների մի քանի տեսակներից, որոնք կարող են առաջացնել լուրջ վարակներ երեխաների և չափահասների մոտ: Մանկական 4 դեղաչափով շարքը խորհուրդ է տրվում մինչև 5 տարեկանը: Ավելի մեծ երեխաների և չափահասների դեպքում ընդունեք՝ ինչպես խորհուրդ է տրվում:
- **Գոտևորող որքինի (shingles) դեմ պատվաստանյութ:** Երկու դեղաչափից բաղկացած այս պատվաստանյութը տարեց չափահասներին պաշտպանում է գոտևորող որքինից՝ առավելագույն պաշտպանության համար ընդունվելով երկուսից վեց ամիս ընդմիջումով: Խորհուրդ է տրվում 50 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասներին, նույնիսկ եթե նախկինում հիվանդացել եք ջրծաղիկով: Պարզեք Ձեր մատակարարից՝ արդյոք Դուք արդեն ստացել եք մեկ դեղաչափից բաղկացած Zoster պատվաստանյութը:

County of Los Angeles Public Health

Պատվաստանյութեր

Քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց համար

- **Փայտացման, դիֆթերիայի և կապույտ հազի (Tdap) դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութի մեկ դեղաչափը պաշտպանում է փայտացումից, դիֆթերիայից և կապույտ հազից: Դուք կարող եք խթանիչի կարիք ունենալ յուրաքանչյուր 10 տարին մեկ:
- **Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ պատվաստանյութ:** 60 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց դեպքում մեկ դեղաչափը պաշտպանում է շնչառական սինցիտիալ վիրուսից (RSV): Խորհրդակցեք Ձեր մատակարարի հետ՝ հավելյալ տեղեկությունների համար:
- **Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանուութ:** Սա երկու կամ երեք դեղաչափից բաղկացած շարք է, որը խորհուրդ է տրվում բոլորին. 60 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդիկ պետք է խորհրդակցեն իրենց մատակարարի հետ՝ այս պատվաստանյութը ստանալու համար:

Ինչպե՞ս ես պատվաստվեմ:

- Այցելեք Ձեր բժշկական մատակարարին կամ դեղատուն:
- Հարցրեք Ձեր մատակարարին՝ արդյոք Ձեզ խորհուրդ են տրվում հավելյալ դեղաչափեր:
- Եթե չունեք մատակարար, այցելեք http://publichealth.lacounty.gov/vaccines՝ անվճար կամ ցածր արժեքներով պատվաստման կլինիկաների ցանկի և պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկությունների համար:
- Լավագույնն այն է, որ Դուք կարող եք պատվաստումների մեծ մասն անել միևնույն այցի ընթացքում:

Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8-ը՝ շաբաթը յոթ օր: